

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲՄԱՇՁԲ-10/1-1**

ք. Երևան

21-րդ մայիսի 2019թ.

«Վաշտպանության նախարարությունը, ի դեմս «Վաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջերմագազին» ՍՊ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Քոչունցի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ջրուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են «Վ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 20.12.2019թ.: Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով՝ համաձայն հաստատված թերությունների ակտերի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ «Վ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Պայմանագրին և ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր առավելագույն գինը կազմում է **150,000,000** (հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, որից **25,000,000** (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ**, որտեղ՝

ՄԳ-ն ընտրված մասնակցի՝ Կապալառուի առաջարկած ընդհանուր գինն է, որը կազմում է **32,389,890** (երեսուներկու միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ)):

ՆԳ-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի «Ամբողջ»-ը տողում նշված գինն է, որը կազմում է **33,220,402** (երեսուներեք միլիոն երկու հարյուր քսան հազար չորս հարյուր երկու) ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ)):

ԾԳՏ-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի՝ ըստ առանձին տողերի համար սահմանված միավորի գինն է՝ գումարած ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված՝ Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի առանձին տողերի ծավալն է:

ՎԳՏ-ն Պատվիրատուի կողմից սույն ընթացակարգի հրավերով հաստատված ծավալաթերթ-նախահաշվի առանձին տողերի դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 38 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011117034
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

«Ջերմագազին» ՍՊԸ
ք. Երևան, Արին Բերդի 5-րդ նրբ. 1/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/հ 1570004466230100
ՀՎՀՀ 01236906
տնօրեն

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

Վ. ՔՈՉՈՒՆՑ

**ԾԱԿԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
«ՋԵՌՈՒՑՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Հ/հ	Հիմնավորում	Շինման աշխատանքների, նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների անվանումը	Չափման միավորը	Միավորի արժեք /ներառյալ վերադիր ծախսեր/ շահույթ/ (ՀԱՅԱՐ ՀՀ ԴՐԱՄ)
1	2	3	4	5
		Աշխատանքներ / առանց նյութերի պատրաստվածքների և սարքավորումների/		
1	Կ1-1672 11-16	Գրունտի մշակում էքսկավատորով, կողիցք, շերտի տարողությունը 0,5լմ, գրունտ 4 կարգ	100մ³	95,877
2	Կ1-1727 31-3	Խրամառիների և փոտրակների ետլիցք մինչև 59կկտ (80ծ.ո) հորրոլայան թուղբերով, տեղափոխելով մինչև 5մ, գրունտ 3 կարգ	100մ³	11,855
3	Կ1-961	Գրունտի մշակում ձեռքով խրամառիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեթույուններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 3 կարգ գրունտներում	մ³	2,281
4	Կ1-962	Գրունտի մշակում ձեռքով խրամառիների՝ մինչև 2մ խորությամբ, առանց ամրակապման, թեթույուններով, և փոսերի փորում մինչև 1,5մ խորությամբ, 4 կարգ գրունտներում	մ³	4,023
5	Կ1-966	Փոսերի փորում կանգնակների և սյուների համար մինչև 0,7մ խորությամբ 4 կարգ գրունտներում	մ³	7,631
6	Կ1-968	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամառիների, փոտրակների և փոսերի 2 կարգ գրունտներում	մ³	0,954
7	Կ1-969	Ետլիցք ձեռքով կոշտուկների փխրեցումով ու տոփանումով խրամառիների, փոտրակների և փոսերի 3 կարգ գրունտներում	մ³	1,161
8	Կ27-33	Անֆայրետոն ծածկույթների քանդում	100մ³	438,347
9	Կ27-124 կիրառ q _բ =0; q _բ = 0,237	Անֆայրետոն ծածկույթների ակոսահատում	100մ	66,121
10	Կ27-31	Խճաղվածքների քանդում	100մ³	57,083
11	Կ27-35	Եզրագրերի քանդում իր հիմնաստակով	100մ	91,238
12	Կ46-77	Բետոն և խամբարաբետոն հիմքերի քանդում	մ³	48,669
13	Կ46-78	Երևտոն հիմքերի քանդում	մ³	84,186
14	Կ46-100	Բետոն հատակների քանդում	մ³	13,256
15	Կ46-(156-158) կիրառ	10-39մ տրամագծով, 200մ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլիկներում կատուցատարներում արմատային օղան գայլիկներով, սառեցնող հերովի օգտագործմամբ	100 հատ	80,509
16	Կ46-(172-174) կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել անն 10մ խորության փոփոխման 10-39մ տրամագծով անցքերի համար	100 հատ	0,812
17	Կ46-(159-163) կիրառ	40-69մ տրամագծով, 200մ խորությամբ ուղղաձիգ անցքերի գայլիկներում երևտոն կատուցատարներում արմատային օղան գայլիկներով, սառեցնող հերովի օգտագործմամբ	100 հատ	92,133
18	Կ46-177 կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել անն 10մ խորության փոփոխման 40-69մ տրամագծով անցքերի համար	100 հատ	2,896
19	Կ46-(188-190) կիրառ	20-39մ տրամագծով, 200մ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկներում երևտոն կատուցատարներում արմատային օղան գայլիկներով, սառեցնող հերովի օգտագործմամբ	100 հատ	103,174
20	Կ46-(204-206) կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել անն 10մ խորության փոփոխման 20-39մ տրամագծով անցքերի համար	100 հատ	1,877
21	Կ46-(191-195) կիրառ	40-69մ տրամագծով, 200մ խորությամբ հորիզոնական անցքերի գայլիկներում կատուցատարներում արմատային օղան գայլի կոններով, սառեցնող հերովի օգտագործմամբ	100 հատ	141,624
22	Կ46-(208-211) կիրառ	Ավելացնել կամ պակասեցնել անն 10մ խորության փոփոխման 40-69մ տրամագծով անցքերի համար	100 հատ	2,51
23	14-320 կիրառ	Պատերի, սյուների, հեծանների և առատաղների մաքում ներկից	100մ²	16,381
24	Կ46-38	Բացվածքների իրակամացում խամբարաբետոն կատուցատարներում	մ³	18,395
25	Կ46-40	Բացվածքների իրակամացում բարձր կատուցատարներում	մ³	21,946

Կ-9-123 կիրառ q=0,6; 0,7	Պողպատե կառուցատարրերի ավազանաժամանակ	տն	45.059
26	Պողպատե կառուցատարրերի ավազանաժամանակ	տն	45.059
27	Ամրապնակային մեքենայի, կոտնային ծառայություն	ժամ	5.11
28	Ապահովագրական նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի կուտակում, բարձր մեքենայի մեքենայի և տեղափոխում, մինչև 1կմ	տն	3.014
29	Ապահովագրական նյութերի, շին աղբի և ավելացված բնահողի տեղափոխում, մինչև 1կմ	տն	0.92
30	Ավելացված լրացուցիչ կամ տեղափոխման համար (միավորի արժեքը x հեռավորության երկարության հետ; Մ/արժեք(x-1), որտեղ n-ը կուտակության բարձրան տեղից մինչև թափանցանքը ընկած տարածության երկարություն է կմ-ով)	տն	0.17
31	Իսամբարաբետոնե ժապավենային հիմքերի իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /ձախալ՝ բետոն 0,71խմ; փայտ 0,0101խմ; խամբար 0,44խմ; կարգապարամած 0,918քմ	մ³	5.959
32	Բետոնե հիմքերի իրականացում խտացումով, սարքավորումների տակ առանց արժեքի / ձախալ՝ բետոն 1,02խմ; փայտ 0,036խմ; կարգապարամած 1,16քմ	մ³	8.94
33	Բետոնե հենասյուների իրականացում խտացումով, առանց նյութերի արժեքի /ձախալ՝ բետոն 1,02խմ; հեղուց մանեկ 0,9կգ; փայտ 0,0165խմ; կարգապարամած 0,717քմ	մ³	4.338
34	Ամրամային պողպատե շինվածքների, ցանցերի, ծորիկի էլեմենտների պատրաստում և տեղադրում բետոնե կառուցատարրերի կարգապարամածների մեջ առանց նյութերի արժեքի (ձախալ՝ ամրան, ցանց 1,0տ - 1,0t; 1,02տ; պողպատե ամրակալ 1,0տ- 4կգ)	տ	44.84
35	Ե/բետոնե հիմնային հեծանների իրականացում խտացումով, առանց բետոնի և ամրանի արժեքի /ձախալ՝ բետոն 1,015խմ; էլեկտրոդ 1,7կգ; փայտ 0,0308խմ; կարգապարամած 2,05քմ	մ³	16.085
36	Բետոն և բազալտե եզրաքարերի (նայթեղների) տեղադրում բետոնե 415 դասի հիմքի վրա; հողային արկի պատրաստում հիմքի համար, բետոնե հիմքի իրականացում խտացումով, կարգապարամածի տեղադրում և ավանդաժամ, եզրաքարերի տեղադրում հարմարատաշումով, կարամների լցում գծանշակումով, առանց նյութերի արժեքի /ձախալ՝ եզրաքար 1գծմ; բետոն 0,04* 0,06խմ; ց/ա շարվախ 0,0006խմ	մ	1.252
37	Բազալտե եզրաքարերի և նայթեղների ուղղում /շրջակողների քանդումով, բետոնե հիմնաստվածների համարում, քարերի ուղղում եշագծով, շրջակողների հեղուց տափանցումով կարամների միջոց ց/ա շարվախով, առանց նյութի արժեքի /ձախալ՝ ց/ա շարվախ 0,001խմ	մ	0.684
38	Նայթեղապատական և հարթեղող շերտի իրականացում խճով, առանց նյութերի արժեքի, ներքնաշերտի համարում, տուփանում, խճի ցրում հարթեղում, գլորում՝ հարթ թմբում/ներով 6,5տ և 10,0տ; ավելանալի ղորեղով 18,0տ և ցրում /ձախալ՝ խճ 1,26խմ, ցոր 0,07խմ	մ³	2.817
39	Երկշերտ ծածկույթի ներքին կամ վերին շերտի/շերտի հաստ, մինչև 6սմ/ իրականացում ավանդաժամով տեղական նշանակության ճանապարհներում և մայրուղի, հաստ, ըստ տեղային պահանջի, առանց նյութերի արժեքի (հիմնաստվածի մաքրում, կցվածքների ըստ հանրաճանաչման, ավանդաժամի խտանույրի փոստ առանց ամֆատափոխների, և խտացում գլորումով 6,5տ) /ձախալ՝ հանքածույր 0,06տ ավանդաժամի ըստ տիպի և մակերեսի, խտացված միճակում 0,5սմ -1,2սմ	100մ²	17.762
40	Ծանր 47,5; 12,5;15;20;22,5 դասի բետոնի պատրաստում տեղում առանց բաղադրիչների արժեքի /ձախալ՝ խճ 0,8խմ; ցոր 0,21խմ, ավազ 0,58;0,57;0,53;0,5;0,47 խմ; ցեմենտ Մ400 դասի /CEM-II/A-P, 42,5N/ 214;235;286;332; 382 կգ	մ³	5.257
41	Միջնորմեր գիպսե ավերից, մեկշերտ, մինչև 100մմ հաստ, հարկի բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ձախալ՝ փայտ 0,1խմ; գիպս- ավերաատր 0,57տ; կրվածք 8կգ; ամրան մինչև 40մմ 0,013տ, տոլ 6քմ; ավազ 0,6խմ; ավեր 10սմ հաստ, 0,91քմ	100մ²	140.155
42	Պատերի և սյուների մաքրող շարվածք կանոնավոր ձևի տուփ քարերից, հարկի բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ձախալ՝ տուփե քար 0,92խմ, ց/ա շարվախ 0,18խմ	մ³	9.25
43	Պատերի շար թեթև, բետոնե քարերից/բլոկներից/ կարանների գծանշակումով, հարկի բարձրությունը մինչև 4մ, առանց նյութերի արժեքի /ձախալ՝ բետոնե բլոկ 0,92խմ, ց/ա շարվախ 0,11խմ	մ³	7.012
44	Թեթև, բետոնե բլոկների դատարկությունների լցում թեթև, ցանյութով, լիմ շարի համար մինչև 0,25խմ ցանյութով, առանց ցանյութի արժեքի	մ³ /շար	2.37
45	Պատերի և այլ կառուցատարրերի շարվածքի ամրանավորում մետաղական ցանցերով, ամրաններով և մետաղալարերով, առանց նյութերի արժեքի	տ	62.346
46	Կառուցատարրերի ամրանցում պողպատե ամրակալներով	տ	50.874
47	Պողպատե կառուցատարրերի պատրաստում և մոնտաժում /առանց նյութերի արժեքի/	տ	123.985
48	Մետաղական դասն պատրաստում իր շրջանակով և պարագաններով /առանց նյութերի արժեքի/	տ	320.749
49	Մետաղական դասն տեղադրում /առանց արժեքի/	մ²	5.322

50	Կ11-55:57; 67:69; 75; 79; 80 հաշվ.	Հարթեցնող շերտի, բետոնե ծածկույթների պատրաստում ցանկերում նշված շարժական շարժվող, տարբեր դասի և տեսակի բետոններով 20մմ հաստ. առանց նյութերի արժեքի /տարացումով, ծախս՝ ցանկում նշված/ (ծախսը՝ 2,2կգ)	100մ ²	83.678
51	Կ11-56:58; 68; 70; 76; 81; 82 հաշվ.	Ամեն հաջորդ ցանկում նշված շերտի, բետոնի շերտի փոփոխման դեպքում ավելացնել կամ պակասացնել առանց նյութի արժեքի /ծախս՝ ցանկում նշված/ (ծախսը՝ 0,5լիտր)	100մ ²	10.107
52	Կ15-611	Մետաղական մեծ մակերևույթների ներկում (բացի տանիքածածկերի) մեկ անգամ /առանց նյութերի արժեքի; ծախսը՝ բիտում պոլիմերային ներկ/երկվաթ/ -0,2կգ առանց լուծիչի կամ ներկ 21,2կգ, օլիֆ կամ լուծիչ 3,2կգ/	100մ ²	12.347
53	Կ15-612	Մետաղական մեծ մակերևույթների ներկում (բացի տանիքածածկերի) երկու անգամ /առանց նյութերի արժեքի; ծախսը՝ բիտում պոլիմերային ներկ/երկվաթ/ -0,2կգ առանց լուծիչի կամ ներկ 27,3կգ, օլիֆ կամ լուծիչ 3,2կգ/	100մ ²	16.377
54	Կ15-613	Պողպատե հեծանների, 50մմ-ից ավել տրամագծով խողովակների և այլն յուրաներկում երկու անգամ /առանց նյութերի արժեքի; ծախսը՝ բիտում պոլիմերային ներկ/երկվաթ/ -0,2կգ առանց լուծիչի կամ ներկ 24,6կգ, օլիֆ կամ լուծիչ 2,7կգ/	100մ ²	44.477
55	Կ15-614	Պողպատե ապակեկանների, ճաղաշարերի, սանտեխնիկական սարքերի, մինչև 50մմ տրամագծով խողովակների և այլն ներկում երկու անգամ /առանց նյութերի արժեքի; ծախսը՝ բիտում պոլիմերային ներկ/երկվաթ/ -0,2կգ առանց լուծիչի կամ ներկ 24,6կգ, օլիֆ կամ լուծիչ 2,7կգ/	100մ ²	79.728
56	Կ16-39 աղ 16- 7.1 կլորառ	Փ15;20;32;40մմ պողպատե խողովակների մոնտաժում /առանց խողովակների արժեքի/	100մ	48.147
57	Կ16-66 աղ 16- 8.1	Փ50մմ պողպատե խողովակների մոնտաժում, /առանց խողովակների և ամրակապերի արժեքի/	100մ	101.309
58	Կ16-67 աղ 16- 8.2	Փ70մմ պողպատե խողովակների մոնտաժում, /առանց խողովակների և ամրակապերի արժեքի/	100մ	115.206
59	Կ16-68:69 աղ 16-8.3	Փ100մմ պողպատե խողովակների մոնտաժում, /առանց խողովակների և ամրակապերի արժեքի/	100մ	133.41
60	Կ16-70:71 աղ 16-8.4	Փ150մմ պողպատե խողովակների մոնտաժում, /առանց խողովակների և ամրակապերի արժեքի/	100մ	183.305
61	Կ16-72 աղ 16- 8.5	Փ200մմ պողպատե խողովակների մոնտաժում, /առանց խողովակների և ամրակապերի արժեքի/	100մ	245.54
62	Կ16-73 աղ 16- 8.6	Փ250մմ պողպատե խողովակների մոնտաժում, /առանց խողովակների և ամրակապերի արժեքի/	100մ	335.814
63	Կ16-74 աղ 16- 8.7	Փ300մմ պողպատե խողովակների մոնտաժում, /առանց խողովակների և ամրակապերի արժեքի/	100մ	388.808
64	Կ22-362 աղ 22-22.5	Պողպատե տրամագիծը մինչև 300մմ խողովակների եռակցվող ձևավոր մասերի և կցաշարերի գործում /առանց ձևավոր մասերի և կցաշարերի արժեքի/	կգ	0.946
65	Կ16-207-210 աղ 16-20.1 տալրբ 16-14.1	Փ15;20;25;40մմ խողովակի միացում գործող ջեռուցման, ջրի ներքին ցանցին /առանց փակված տեղադրման և ձևավոր մասերի, նյութերի արժեքի/	տեղ	5.259
66	Կ16-211 աղ 16- 20.2 տալրբ 16- 12.1	Փ50;65մմ խողովակի միացում գործող ջեռուցման, ջրի ներքին ցանցին /առանց փակված տեղադրման և ձևավոր մասերի, նյութերի արժեքի/	տեղ	6.161
67	Կ16-212-213 աղ 16-20.3 տալրբ 16-12.2	Փ80;100մմ խողովակի միացում գործող ջեռուցման, ջրի ներքին ցանցին /առանց փակված տեղադրման և ձևավոր մասերի, նյութերի արժեքի/	տեղ	6.972
68	Կ16-214:215 աղ 16-20.4 տալրբ 16-12.3	Փ150մմ խողովակի միացում գործող ջեռուցման, ջրի ներքին ցանցին /առանց փակված տեղադրման և ձևավոր մասերի, նյութերի արժեքի/	տեղ	8.063
69	Կ16-216 աղ 16- 20.5 տալրբ 16- 12.4	Փ200մմ խողովակի միացում գործող ջեռուցման, ջրի ներքին ցանցին /առանց փակված տեղադրման և ձևավոր մասերի, նյութերի արժեքի/	տեղ	10.213

70	Կ16-263 գ=0,5 կիրառ	ժա=16-90մ պոլիէթիլեն, պոլիպրոպիլեն, մետաղապլաստ խողովակաշարերի մննատճում, ձևավոր մասերի տեղադրումով, ամրակապումով և փորձարկումով /առանց խողովակների և ամրակապների արժեքի/	100մ	78.055
71	19-1	Պողպատե մինչև փ32մ խողովակաշարերի կազմաքանդում /ապամնտամում/	100մ	35.177
72	19-2	Պողպատե մինչև փ63մ խողովակաշարերի կազմաքանդում /ապամնտամում/	100մ	60.815
73	19-2 գ=1,2 կիրառ	Պողպատե մինչև փ100մ խողովակաշարերի ապամնտամում	100մ	72.978
74	19-2 գ=1,7 կիրառ	Պողպատե մինչև փ150մ խողովակաշարերի ապամնտամում	100մ	103.386
75	19-29	Փակվանների փոխարկում, ֓40:50մ /առանց նյութերի արժեքի/	հատ	1.617
76	19-22 գ=0,7 կիրառ	Ծորակների, ծորակ-խառնիչների տեղադրում ֓15:20մ /առանց նյութերի արժեքի/	հատ	0.29
77	19-25 գ=0,7 կիրառ	Փակվանների տեղադրում ֓15:20մ /առանց նյութերի արժեքի/	հատ	0.697
78	19-27 գ=0,7 կիրառ	Փակվանների տեղադրում, ֓25:32մ /առանց նյութերի արժեքի/	հատ	0.885
79	19-29 գ=0,7 կիրառ	Փակվանների տեղադրում ֓40:50մ /առանց նյութերի արժեքի/	հատ	1.132
80	19-22 գ=0,35 կիրառ	Ծորակների, ծորակ-խառնիչների ապամնտամում, ֓15:20մ	հատ	0.415
81	19-25 գ=0,35 կիրառ	Փակվանների ապամնտամում, ֓15:20մ	հատ	0.348
82	19-27 գ=0,35 կիրառ	Փակվանների ապամնտամում, ֓25:32մ	հատ	0.443
83	19-29 գ=0,35 կիրառ	Փակվանների ապամնտամում, ֓40:50մ	հատ	0.566
84	8-591-11 կիրառ	Խորցային վարդակների և անջատիչների տեղադրում, կառուցատարների վրա կամ պատրաստի խորշերում /տուփերում/, քանակը մինչև 3 /ընկրված, ոչ ընկրված, բաց կամ փակ է/ հատորալարի տեղադրման համար /առանց արժեքի/	հատ	0.329
85	10-975-8 գ=0,3	Վարդակների, անջատիչների տուփերի տեղադրում, պատրաստի խորշերում /առանց տուփի արժեքի/	հատ	0.296
86	10-975-8	Էլ. լուսամուրոջան բաժանման տուփերի տեղադրում, պատրաստի խորշերում /առանց տուփի արժեքի/	հատ	0.986
87	8-402-1	Բաց /կառուցատարի վրայով է. հատորալարի/ կամ մարմնի/ մննատճում /առանց արժեքի/	100մ	23.909
88	8-402-2	Փակ /ակոսում և այլն/ է. հատորալարի /կամ մարմնի/ մննատճում /առանց արժեքի/	100մ	28.294
89	8-409-2	Առաջին է. հատորալարի /մարմնի/ միացիլ կամ բազմաջիլ միապատվածքում, երկարաձգում ուսինն ճխողովակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունարային կտր, մինչև 6քմ /առանց արժեքի/	100մ	15.722
90	8-409-3	Առաջին է. հատորալարի /մարմնի/ միացիլ կամ բազմաջիլ միապատվածքում, երկարաձգում ուսինն ճխողովակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունարային կտր, մինչև 16քմ /առանց արժեքի/	100մ	24.989
91	8-409-4	Առաջին է. հատորալարի /մարմնի/ միացիլ կամ բազմաջիլ միապատվածքում, երկարաձգում ուսինն ճխողովակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունարային կտր, մինչև 35քմ /առանց արժեքի/	100մ	32.886
92	8-409-5	Առաջին է. հատորալարի /մարմնի/ միացիլ կամ բազմաջիլ միապատվածքում, երկարաձգում ուսինն ճխողովակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունարային կտր, մինչև 70քմ /առանց արժեքի/	100մ	38.38
93	8-409-6	Առաջին է. հատորալարի /մարմնի/ միացիլ կամ բազմաջիլ միապատվածքում, երկարաձգում ուսինն ճխողովակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունարային կտր, մինչև 120քմ /առանց արժեքի/	100մ	45.653
94	8-409-12	Ամեն հաջորդ է. հատորալարի /մարմնի/ միացիլ կամ բազմաջիլ միապատվածքով, երկարաձգում ուսինն ճխողովակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունարային կտր, մինչև 6քմ ավելացել /առանց արժեքի/	100մ	2.613
95	8-409-13	Ամեն հաջորդ է. հատորալարի /մարմնի/ միացիլ կամ բազմաջիլ միապատվածքով, երկարաձգում ուսինն ճխողովակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունարային կտր, մինչև 16քմ, ավելացել /առանց արժեքի/	100մ	4.935

96	8-409-14	Ամեն հաջորդ էլ. հաղորդալարի /նալույվի/ միացիլ կամ բազմացիլ միապատվածքով, երկարաձգում ռեախեն ճխորդակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունառալային կտր. մինչև 35քմ, ավելացնել /առանց արժեքի/	100մ	5.619
97	8-409-15	Ամեն հաջորդ էլ. հաղորդալարի /նալույվի/ միացիլ կամ բազմացիլ միապատվածքով, երկարաձգում ռեախեն ճխորդակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունառալային կտր. մինչև 70քմ, ավելացնել /առանց արժեքի/	100մ	6.055
98	8-409-16	Ամեն հաջորդ էլ. հաղորդալարի /նալույվի/ միացիլ կամ բազմացիլ միապատվածքով, երկարաձգում ռեախեն ճխորդակներում կամ պոլիէթիլեն խողովակներում, գունառալային կտր. մինչև 120քմ, ավելացնել /առանց արժեքի/	100մ	8.232
99	8-399-1	Էլ. հաղորդալարի /նալույվի/ ձգում տուփախողովակներում /սակառնել/ գունառալային կտր. մինչև 35քմ (առանց արժեքի)	100մ	23.335
100	8-399-2	Էլ. հաղորդալարի /նալույվի/ ձգում տուփախողովակներում /սակառնել/ գունառալային կտր. մինչև 120քմ (առանց արժեքի)	100մ	32.87
101	8-398-1 կիրառ	Տուփախողովակների /սակառնել/ տեղադրում, էլ. հաղորդալարները և մալուխները անջկացնելու համար /առանց արժեքի/	100մ	48.311
102	8-418-1 կիրառ	Ռեախեն ճկախողովակի կամ պոլիէթիլեն խողովակների տեղադրում կառուցատարրերի վրա և ակուններում, ներքին տրամ, մինչև 25մ	100մ	18.35
103	8-418-2 կիրառ	Ռեախեն ճկախողովակի կամ պոլիէթիլեն խողովակների տեղադրում կառուցատարրերի վրա և ակուններում, ներքին տրամ, մինչև 32մ	100մ	19.557
104	8-418-3 կիրառ	Ռեախեն ճկախողովակի կամ պոլիէթիլեն խողովակների տեղադրում կառուցատարրերի վրա և ակուններում, ներքին տրամ, մինչև 50մ	100մ	21.463
105	8-599-1	Լ-ուսատուներ տեղադրում լանայերի քանակը մինչև 2 /առանց արժեքի/	հատ	2.307
106	8-599-2	Լ-ուսատուներ տեղադրում լանայերի քանակը մինչև 4 /առանց արժեքի/	հատ	2.771
107	8-525-1	Ավտոմատ միաբևեռ, երկբևեռ, եռաբևեռ անջատիչների տեղադրում պահարաններում, կառուցատարրերի, պատերի կամ սյուների վրա, խզման հոսանքը 25Ա /առանց սարքավորման արժեքի/	հատ	2.037
108	8-525-2	Ավտոմատ միաբևեռ, երկբևեռ, եռաբևեռ անջատիչների տեղադրում պահարաններում, կառուցատարրերի, պատերի կամ սյուների վրա, խզման հոսանքը 63Ա /առանց սարքավորման արժեքի/	հատ	2.361
109	8-531-1	Մազմխական գործարկիչի տեղադրում պահարաններում, կառուցատարրերի, պատերի կամ սյուների վրա, խզման հոսանքը մինչև 40Ա /առանց արժեքի/	հատ	3.404
110	8-531-2	Մազմխական գործարկիչի տեղադրում պահարաններում, կառուցատարրերի, պատերի կամ սյուների վրա, խզման հոսանքը մինչև 100Ա /առանց արժեքի/	հատ	4.294
111	ՇԱԼԵ թիվ 14-84 2-1932 կիրառ	Ցածր լարման էլ արկի մոնտաժում, մինչև 6 սարքի տեղադրում /առանց արկի և սարքավորումների արժեքի/	հատ	8.953
112	ՇԱԼԵ թիվ 14-84 2-913 կիրառ	Ցածր լարման էլ արկի մոնտաժում, մինչև 16 սարքի տեղադրում /առանց արկի և սարքավորումների արժեքի/	հատ	20.485
113	Կ24-1	Խրամուղում և վերգետնյա ջերմացանցի/գազատարի/ պողպատե խողովակաշարերի մոնտաժում իր շարժական, անշարժ հենակներով և ձևավոր մասերով, ջրաճշումային փորձարկումով, պայմ. տրամագիծը $\Phi 50$ մմ (ծախսը խող. 100մ -101մ; հենակները 30կգ) /առանց նյութերի արժեքի/	100մ	141.149
114	Կ24-2	Խրամուղում և վերգետնյա ջերմացանցի պողպատե խողովակաշարերի մոնտաժում իր շարժական, անշարժ հենակներով և ձևավոր մասերով, ջրաճշումային փորձարկումով, պայմ. տրամագիծը $\Phi 70$ մմ (ծախսը խող. 100մ -101մ; հենակները 30կգ) /առանց նյութերի արժեքի/	100մ	155.516
115	Կ24-3	Խրամուղում և վերգետնյա ջերմացանցի/գազատարի/ պողպատե խողովակաշարերի մոնտաժում իր շարժական, անշարժ հենակներով և ձևավոր մասերով, ջրաճշումային փորձարկումով, պայմ. տրամագիծը $\Phi 80$ մմ (ծախսը խող. 100մ -101մ; հենակները 32կգ) /առանց նյութերի արժեքի/	100մ	160.996
116	Կ24-4	Խրամուղում և վերգետնյա ջերմացանցի/գազատարի/ պողպատե խողովակաշարերի մոնտաժում իր շարժական, անշարժ հենակներով և ձևավոր մասերով, ջրաճշումային փորձարկումով, պայմ. տրամագիծը $\Phi 100$ մմ (ծախսը խող. 100մ -101մ; հենակները 36կգ) /առանց նյութերի արժեքի/	100մ	178.769
117	Կ24-5	Խրամուղում և վերգետնյա ջերմացանցի/գազատարի/ պողպատե խողովակաշարերի մոնտաժում իր շարժական, անշարժ հենակներով և ձևավոր մասերով, ջրաճշումային փորձարկումով, պայմ. տրամագիծը $\Phi 125$ մմ (ծախսը խող. 100մ -101մ; հենակները 38կգ) /առանց նյութերի արժեքի/	100մ	200.669
118	Կ24-6	Խրամուղում և վերգետնյա ջերմացանցի/գազատարի/ պողպատե խողովակաշարերի մոնտաժում իր շարժական, անշարժ հենակներով և ձևավոր մասերով, ջրաճշումային փորձարկումով, պայմ. տրամագիծը $\Phi 150$ մմ (ծախսը խող. 100մ -101մ; հենակները 40կգ) /առանց նյութերի արժեքի/	100մ	223.942
